

## „ԷԶՄԻԱՍԻՆ“ ԱՄՍԱԳՐԻ ՀԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Ամսագրիդ 1948 թ. հունվար—փետրվար համարում՝ Գ. Հարությունյանի «Կոմիտասի կենսագրությանը վերաբերող նյութեր» վերնագիրը կրող հոդվածում (էջ 53) պատմական մի կոպիտ սխալ է մտած, որն անհրաժեշտ ենք համարում ուղղել:

Այդ հոդվածում (էջ 53), ի միջի այլոց, կարդում ենք. «Ավագ սարկավագ Սողոմոն Սողոմոնյանը 1893 թ. ավարտում է ձեմարանի լսարանական դասընթացը և նույն թվի հոկտ.—ի 5-ին էլ նշանակվում է երաժշտության դասատու իր իսկ ավարտած ձեմարանում: Այս մասին ձեռքի տակ ունենալ ձեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանի երկտող հրաժարագիրը՝ կաթողիկոսին հասցեագրված» (մենք ենք ընդգծել. Ա. Տ.—Պ.): Մի քանի տող ցած բերված է այդ հրաժարագիրը. ահա՛, այն.

«Համաձայն պատուիրանի Սրբության Զերոյ, զպարոն Կարա-Մուրզա արձակեցի ի պաշտօնէ՛ ուսուցչութեան երգեցողութեան և զՍողոմոն սարկավագ կարգեալ ի նոյն պաշտօն, դամ մատուցանել զհրաժարական իմ ի պաշտօնէ տեսչի ձեմարանի և ամենախոնարհաբար խնդրել զտնօրինութիւն վեհափառութեան Զերոյ» (էջ 54):

Որ Կոմիտասը 1893 թ. ավարտել է ձեմարանի լսարանական դասընթացը և նույն թվի հոկտեմբերի 5-ին էլ երաժշտության դասատու կարգվել նույն ձեմարանում՝ այդ միանգամայն ճիշտ է, բայց որ այդ թվին (1893) ո՛չ Կ. Կոստանյանը կարող էր Կարա-Մուրզային արձակած լինել իր պաշտոնից և նույն պաշտոնին Սողոմոն սարկավագին կարգած և ո՛չ էլ Կաթողիկոսին նման հրաժարագիր ներկայացրած՝ այդ նույնօրն ճիշտ է ու հաստատ: Ահա թե ինչու:

Կարապետ Կոստանյանը 1892/93 և 1893/94 ուսման տարիներում տեսուչ էր Թիֆլիսի ներսիսյան դպրոցում (երբ ես էլ աշակերտ էի նույն դպրոցում), իսկ այդ միևնույն թվականներին ձեմարանի տե-

սուչն էր Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը, որն և ձեմարանի երաժշտության դասերի համար ուսուցիչ էր հրավիրել հայտնի երաժշտագետ Կարա-Մուրզային: Նորընտիր Կաթողիկոս Խրիմյանը պատվիրում է ձեմարանի տեսուչ Սեդրակյան եպիսկոպոսին արձակել կաթողիկ Կարա-Մուրզային և նրա փոխարեն, նույն պաշտոնին, կարգել Սողոմոն սարկավագին: Տեսուչ Սեդրակյանն անհապաղ կատարում է կաթողիկոսի կարգադրությունը, բայց և միաժամանակ ու անմիջապես իր այդ հայտնի հրաժարականը ներկայացնում, որ, խսկապես, պարզ հրաժարական չէ, այլ ուղղակի մի խիստ ու լակոնիկ բողոք կաթողիկոսի դեմ, Կարա-Մուրզային արձակել տալու կարգադրությանը կապակցությամբ: Սեդրակյան եպիսկոպոսի այդ բողոք-հրաժարականի մասին երկար ժամանակ ամբողջ էջմիածինն էր խոսում:

Կ. Կոստանյանը ձեմարանի տեսուչ է հրավիրվում 1894 թվի սեպտեմբերից, որ իր աշակերտ Կոմիտասի երաժշտական տաղանդը ճանաչող ու զնահատող անձերից առաջիններից մեկը հանդիսանալով, իր տեսչության սամբողջ ժամանակաշրջաններում (1894—1899 և 1902—1905 թ. թ.), ամեն կերպ նպաստում է նրա հետագա առաջադիմությանն ու տաղանդի զարգացմանը: 1895—1901 լինելով ձեմարանի աշակերտ (և այնուհետև որպես պաշտոնյա 1901—1903 թ. թ.) կենդանի վկա ենք մեր ասածներին: Իսկ ըստ հոդվածագիր Գ. Հարությունյանի, բողոքավորի դերում Կ. Կոստանյանն է հանդես գալիս և այն տպավորությունն ստացվում, թե նա դեմ է եղել ձեմարանի երաժշտության դասերը Կոմիտասին տալուն, որ ճիշտ չէ:

Պրոֆ. Ա. Լ. ՏԻՖԼԻՍԻ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

12 մարտի, 1950 թ.

Երևան

